ԿԱՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

1. Ընդհանուր դրույթներ և պայմաններ

1.1. Սույն Կայքի օգտագործման կանոնները (այսուհետ՝ Կանոններ) սահմանում և կարգավորում են «Դոպինգ Սփեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 02893152, գտնվելու վայրը՝ ք.Երևան, Նալբանդյան 25 ա բն 58), (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող https://dopingspace.com/ կայքի (այսուհետ՝ «Կայք») օգտագործման կանոնները:

1.2. Մուտք գործելով Կայք, օգտագործելով Կայքի ցանկացած ծառայություն կամ հերբեռնելով ցանկացած բովանդակություն՝ ամբողջությամբ կամ դրա մի մասը Դուք, որպես Օգտատեր (այսուհետ նաև՝ Դուք, Ձեզ, Ձեր, Հաճախորդ, Գնորդ) հաստատում եք, որ ամբողջությամբ կարդացել և հասկացել եք Կանոնները, անվերապահորեն ընդունում եք դրանք, անկախ նրանից՝ Դուք Ընկերության կողմից իրականացվող Վաճառքի հաճախորդ եք, Կայքի գրանցված Օգտատեր, թե՝ ուղղակի այցելու:

1.3. Կայքը տրամադրում է ընդհանուր տեղեկություններ տարբեր միջոցառումների վերաբերյալ և նախատեսված է Ձեր կողմից օգտագործման և միջոցառման տոմսեր գնելու համար:

1.4. Կայքում գրանցվել կամ գնում կատարել կարող են քաղաքացիաիրավական գործունակություն ունեցող 18 տարեկանը լրացած անձիք: 18 տարեկանը չլրացած կամ անգործունակ (դատարանի կողմից այդպիսին ճանաչված) անձանց կողմից կատարված գործողությունների հետևանքների համար Ընկերությունը պատասխանատվություն չի կրում: Սույն կետի պահանջների խախտման համար ամբողջական պատասխանատվություն կրում է Օգտատերը:

1.5. Ընկերությունը Օգտատերերին վաճառում է միջոցառումների տոմսեր: Տոմսերի վաճառքի հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են https://dopingspace.com/public-offer-arm.pdf

1.6. տեղադրված Հրապարակային օֆերտայի պայմանագրով:

1.7. Կանոնները կարող են ենթարկվել փոփոխությունների առանց նախնական ծանուցման: Ձեր կողմից այն օգտագործելը նշանակում է ստորև նշված պայմանների ընդունում Կայքի առաջին իսկ օգտագործման պահից:

1.8. Ընկերությունն աշխատում է հնարավորինս ստուգել և թեստավորել Կայքում տեղադրված նյութերը, սակայն խնդրում ենք ձեռնարկել Ձեր սեփական նախազգուշական միջոցները՝ համոզվելու համար, որ Կայք մուտք գործելիս Դուք զերծ եք վիրուսների կամ սխալների վտանգից, որոնք կարող են վնասել Ձեր սեփական համակարգչային համակարգը: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Ձեր տվյալների կամ Ձեր համակարգչային համակարգի կորստի, անսարքության կամ վնասման համար, որոնք կարող են առաջանալ այս Կայքից ստացված նյութերի օգտագործման արդյունքում:

2. Տերմիններ և սահմանումներ

2.1. Սույն Կանոններում, եթե ուղղակիորեն այլ բան չի բխում տեքստից, հետևյալ տերմիններն ունեն հետևյալ նշանակությունները.

«Օգտատեր»՝ ցանկացած եղանակով, այդ թվում՝ Կայք այցելելու միջոցով Կայքից օգտվող ցանկացած անձ:

«Կայք»՝ Տեղեկատվության, տեքստերի, գրաֆիկական տարրերի, դիզայնի, պատկերների, լուսա և տեսանյութերի և այլ մտավոր գործունեության արդյունքների, ինչպես նաև էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար ծրագրերի ամբողջություն, որը պարունակվում է https://dopingspace.com/ հղմամբ համացանցում նման տեղեկատվության հասանելիությունն ապահովող տեղեկատվական համակարգում:

«Կանոններ»՝ Կայքից օգտվելու սույն Կանոնները:

2.2. Կանոնների տեքստում հանդիպող բոլոր այլ տերմինները և սահմանումները Կողմերի կողմից մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությանը, ինչպես նաև համացանցում ձևավորված համապատասխան տերմինների մեկնաբանման համընդհանուր կանոններին համապատասխան:

2.3. Կանոններում օգտագործվող վերնագրերը (բաժինների անվանումները) նախատեսված են Կանոնների տեքստի օգտագործումը հեշտացնելու նպատակով և ուղիղ իրավաբանական նշանակություն չունեն:

3. Կանոնների պարտադիր բնույթը և Կանոնների փոփոխությունները

3.1. Համացանցում https://dopingspace.com/rules-of-website-use-arm.pdf հղմամբ մշտապես տեղադրված Կանոնների տեքստը պարունակում է Կայքից օգտվելու բոլոր պայմանները և հանդիսանում է Ընկերության առաջարկությունը ցանկացած Օգտատիրոջ օգտվել Կայքից Կանոններում նշված պայմաններով: Այդպիսով, Կանոնների տեքստը հանդիսանում է նաև հրապարակային օֆերտա:

3.2. Ցանկացած երրորդ անձ, օգտվելով Կայքից, ներառյալ՝ Կայք այցելելով, Կայքում ինչ-որ տեղեկություն տեղադրելով, Կայքի հղումը ցանկացած երրորդ անձի փոխանցելով և այլ գործողություններ կատարելով, ակցեպտավորում է օֆերտան:

3.3. Օֆերտան ակցեպտավորելու հենց սկզբնական պահից Օգտատերը համաձայնում է Կանոններին և պարտավորվում է պահպանել դրանք: Կանոններն իրավական ուժ են ստանում Կողմերի միջև ծագող հարաբերությունների նկատմամբ Օգտատիրոջ կողմից Կայքից օգտվելու հենց սկզբնական պահից:

3.4. Ընկերությունն իրավունք ունի փոփոխություն կատարել Կանոններում իր հայեցողությամբ միակողմանիորեն՝ https://dopingspace.com/rules-of-website-use-arm.pdf հղմամբ համացանցում Կանոնների նոր խմբագրությամբ տեքստը տեղադրելու միջոցով: Օգտատերը հաստատում է իր համաձայնությունը Կանոնների պայմանների փոփոխությանը՝ Կայքից օգտվելու ճանապարհով: Փոփոխված Կանոններին համաձայնություն չտալու դեպքում Օգտատերը դադարում է օգտվել Կայքից:

3.5. Օգտվելով Կայքից՝ Օգտատերը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ընկերությունն իրավունք ունի փոխանցել Կանոններով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները ցանկացած երրորդ անձի:

4. Կայքից օգտվելու կարգը

4.1. Կայքից օգտվելուց առաջ Օգտատերը պարտավորվում է ծանոթանալ Կանոնների ընթացիկ խմբագրությունը:

4.2. Կայքից օգտվելիս արգելվում է.

4.2.1. ինչ-որ ձև խախտել ՀՀ գործող օրենսդրության դրույթները,

4.2.2. մոլորեցնել, վարկաբեկել, վիրավորել, հետապնդել, սպառնալ կամ այլ կերպ ոտնահարել Կայքի Օգտատերերի և/կամ երրորդ անձանց իրավունքներն ու ազատությունները,

4.2.3. հրապարակել կամ տարածել կեղծ, վնասակար, անպարկեշտ, անօրինական, ծաղրող, աստվածանարգո, զրպարտող, անտեղին, միջազգային և էթնիկ բախումներ հրահրող տեղեկություններ կամ նյութեր,

4.2.4. տեղադրել ՀՀ օրենսդրությանը հակասող, անօրինական գործունեություն գովազդող և հրահրող, Օգտատերերի կամ երրորդ անձանց մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները ոտնահարող տեղեկություններ, քարոզչական նյութեր, տարածել սպամ, շղթայական հաղորդագրություններ (հաղորդագրություններ, որոնք պահանջում են դրանք փոխանցել մեկ կամ մի քանի օգտատերերի), ֆինանսական բուրգերի սխեմաներ կամ դրանց մասնակցելու կոչեր, ցանկացած այլ հետապնդող տեղեկատվություն, նկարագրել կամ քարոզել հանցավոր գործունեությունը, տեղադրել հրահանգներ կամ ուղեցույցեր հանցավոր արարքներ կատարելու համար,

4.2.5. դիտավորյալ տարածել տարբեր վիրուսներ, դեֆեկտային ծրագրեր, տրոյա ծրագրեր, վնասված ֆայլեր, միստիկ ծրագրեր, ինչպես նաև ցանկացած այլ տեսակի ոչնչացնող կամ մոլորեցնող բնույթ կրող տարրեր,

4.2.6. օգտվել Կայքից ցանկացած վնասակար ձևով կամ այնպիսի եղանակով, որը կարող է խափանել Կայքի նորմալ ֆունկցիոնալությունը,

4.2.7. գովազդել կամ խրախուսել անօրինական գործողությունները,

4.2.8. տեղադրել մյուս Օգտատերերի կամ երրորդ անձանց ցանկացած անձնական տվյալ առանց նրանց համաձայնության,

4.2.9. ձեռնարկել ցանկացած փորձ Կայքի ֆունկցիաներին կամ դրա ցանկացած մասին կամ Կայքին միացված ցանկացած ցանցին անօրինական հասանելիություն ստանալու նպատակով,

4.2.10. օգտագործել ինչ-որ սարքավորումներ, ծրագրեր կամ պրոցեսներ Կայքի բնականոն աշխատանքին, ինչպես նաև Կայքում իրականացվող ցանկացած գործողությանը կամ ցանկացած երրորդ անձի կողմից Կայքից օգտվելուն միջամտելու կամ նման փորձ կատարելու համար,

4.2.11. օգտագործել ցանկացած ավտոմատ սարքավորումներ, ծրագրեր, ալգորիթմներ, մեթոդներ կամ ցանկացած նմանատիպ կամ համարժեք ձևով կատարվող գործողություններ Կայքի որևէ մաս մուտք գործելու, ձեռք բերելու, պատճենելու կամ վերահսկելու համար, վերարտադրելու կամ մուտք գործելու համար՝ շրջանցելով Կայքում օգտագործվող նավիգացիոն կամ ցուցադրման համակարգը և ցանկացած բովանդակություն, ինչպես նաև ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկատվություն ստանալու կամ փորձելու համար ցանկացած միջոցներով, որոնք հատուկ չեն ապահովվում Կայքի միջոցով,

4.2.12. օգտվել Կայքից ցանկացած նպատակով, որը խախտում է Կանոնների պայմանները կամ այն երկրի օրենսդրությունը, որտեղից Օգտատերը ստանում է հասանելիություն Կայքին,

4.2.13. հրապարակել, փոխանցել և տարածել հաղորդագրություններ, որոնք կարող են կրել հանցավոր բնույթ և որևէ վնաս պատճառել Ընկերությանը,

4.2.14. հրապարակել, ուղարկել, փոխանցել կամ ցանկացած այլ եղանակով տեղադրել և/կամ տարածել հատուկ ձևով արգելված գովազդային տեղեկություններ, անցանկալի առևտրային նամակներ /սպամ/,

4.2.15. մոլորեցնել Օգտատերերին և/կամ երրորդ անձանց իր անձի հետ կապված,

4.2.16. իրականացնել այլ անձանց անձնական տվյալների անօրինական հավաքագրում և մշակում,

4.2.17. տեղադրել կոմերցիոն և քաղաքական գովազդ,

4.2.18. օգտագործել վճարման ընդունման որևէ եղանակ, որը ուղղակիորեն նախատեսված չէ Կայքում, այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ կանխիկ դրամական միջոցների վճարում ուղղակիորեն անձնական բանկային քարտին կամ հաշվարկային հաշվին, Yandex, Qiwi, WebMoney և նմանատիպ այլ անձնական դրամապանակներին, ինչպես նաև Կայքում տեղադրել որևէ տեղեկություն վճարման նմանատիպ եղանակների վերաբերյալ,

4.2.19. որևէ ձևով մոլորեցնել Օգտատերերին և/կամ երրորդ անձանց միջոցառման մասնակցության արժեքների վերաբերյալ,

4.2.20. օգտագործել անթույլատրելի, անպարկեշտ և կոպիտ խոսակցական բառեր և արտահայտություններ, ինչպես նաև դրանցից ածանցված բառեր և արտահայտություններ:

4.3. Ընկերությունն իրավունք ունի արգելափակել ցանկացած Օգտատիրոջ մուտքը Կայք՝ առանց Օգտատիրոջը նախապես ծանուցելու և պատճառները բացատրելու:

5. Մտավոր սեփականություն

5.1. Կայքը պարունակում է տեղեկություններ, այդ թվում՝ հաշվետվություններ, տվյալներ, հավելվածներ, հատուկ առաջարկներ, մամլո հաղորդագրություններ, լուսանկարներ, գրաֆիկա, տեքստեր, պատկերներ, տարբերանշաններ, պատկերակներ, նկարներ, ծրագրային ապահովումներ, ձայնա և տեսանյութեր, ապրանքային նշաններ, հեղինակային իրավունքներ, մտավոր սեփականության այլ իրավունքներ ու պահպանվող իրավունքներ և այլ նյութեր, որոնք պատկանում են Ընկերությանը, նրա փոխկապակցված անձանց, հովանավորներին, գործընկերներին, ներկայացուցիչներին, բոլոր այլ անձանց, ովքեր գործում են Ընկերության անունից, այլ Օգտատերերին և այլ երրորդ անձանց:

5.2. Օգտատերը Կայքից օգտվելիս ճանաչում է և համաձայն է, որ Կայքը պաշտպանված է հեղինակային իրավունքներով, ապրանքային նշաններով և ՀՀ-ում և այլ երկրներում գործող մտավոր սեփականության այլ իրավունքներով, և որ նշված իրավունքները համարվում են իրական և պաշտպանված են դրանց բոլոր ձևերը, բոլոր կրիչներում և ինչպես ներկայում գոյություն ունեցող, այնպես էլ հետագայում

նախագծվող կամ ստեղծվող բոլոր տեխնոլոգիաների նկատմամբ: Կայքում պարունակվող որևէ բովանդակության, այդ թվում՝ տարբերանշանների և այլ նշանների նկատմամբ ոչ մի իրավունք չի անցնում Օգտատիրոջը՝ Կայքից օգտվելու արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի միջև համաձայնությամբ:

5.3. Չհակասելով վերը նշված դրույթների համընդհանուր նշանակությանը՝ Օգտատերն ընդունում է, որ Կայքը պարունակում է ապրանքային նշաններ, ապրանքներ, ծառայություններ, ֆիրմային անվանումներ, տարբերանշաններ, մտավոր սեփականության իրավունքներ, պաշտպանված իրավունքներ և երրորդ անձանց այլ նյութեր, և որ այդ իրավունքները պատկանում են իրենց համապատասխան սեփականատերերին: Օգտատիրոջն արգելվում է պատճենել, փոփոխել, փոխել, ջնջել, լրացնել, հրապարակել, փոխանցել երրորդ անձանց բացառիկ և անձնական ոչ գույքային իրավունքների նման օբյեկտները, ստեղծել ածանցյալ ստեղծագործություններ, դրանց հիման վրա պատրաստել կամ վաճառել ապրանքներ, վերարտադրել, ցուցադրել կամ որևէ այլ կերպ շահագործել կամ օգտագործել երրորդ անձանց նման իրավունքները՝ առանց դրանց սեփականատերերի հստակ թույլտվության:

5.4. Եթե Օգտատերը կարծում է, որ Կայքի բովանդակության որևէ մասը խախտում է Օգտատիրոջ մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ ունեցած իրավունքները, Օգտատերը պետք է Ընկերությանն ուղարկի համապատասխան բողոք help@dopingspace.com էլեկտրոնային հասցեով:

5.5. Կանոնների 5.4. կետով նախատեսված կարգով ստացված բողոքների դիտարկման հիման վրա Ընկերությունը կարող է որոշում կայացնել կամ բողոքը բավարարելու և Օգտատիրոջ իրավունքները խախտող բովանդակությունը հեռացնելու վերաբերյալ, կամ բողոքը չհիմնավորված լինելու վերաբերյալ:

6. Պատասխանատվությունը

6.1. Ընկերությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում Օգտատերերի և (կամ) այլ անձանց կողմից Կայքում տեղադրված տեղեկատվության և այդ տեղեկատվության հիման վրա կատարված բոլոր գործողությունների համար:

6.2. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Կայքի աշխատանքի համար և չի երաշխավորում դրա անխափան աշխատանքը: Ընկերությունը նաև չի երաշխավորում Կայքում տեղադրված տեղեկատվության պահպանվածությունը:

6.3. Օգտատերն օգտագործում է Կայքն այն ձևով, որով այն ներկայացված է, իր ռիսկով: Ընկերությունը չի երաշխավորում Օգտատիրոջը Կայքից օգտվելու արդյունքում որևէ արդյունքի հասնելը: Օգտագործողն իր ռիսկով է կատարում պատվերներ, վճարումներ, և Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Օգտատիրոջ կրած վնասների համար:

7. Վեճերի լուծումը և կիրառելի իրավունքը

7.1. Կայքից օգտվելու հետ կապված և դրանից բխող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ: Ծագած բոլոր վեճերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն: